ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 99** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ կատարելու ծրագրում փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մշակման, ընդունման, փոփոխությունների կատարման եւ չեղարկման կարգի մասին» հիմնադրույթի 3-րդ կետին, «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 9–րդ հավելված) 3-րդ կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի» թիվ 1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 79 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման եւ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ կատարելու մասին ծրագրում» կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) I բաժնի 3-րդ դիրքը հանել.

բ) II բաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 31-րդ դիրքով՝

«31. Պայթուցիկ նյութերի եւ դրանց հիմքով արտադրատեսակների անվտանգության մասին (ՄՄ ՏԿ 028/2012) (թիվ 1 փոփոխություններ՝ պայթուցիկ նյութերի եւ դրանց հիմքով արտադրատեսակների անվտանգության գնահատման համար պահանջվող ցուցանիշների ցանկի սահմանման մասով՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստելու համար)	Ղազախստանի Հանրապետություն	անդամ պետություններ	2017 թվականի I եռամսյակ	27»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**